

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է

2019-2020 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ

ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱՅԻ ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ

(անվճար և վճարովի հիմունքներով)

Ը Ն Դ ՈՒ Ն Ե Լ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հ/Հ	Դասիչ	Մասնագիտություն	Հատկացված տեղեր	
			Անվճար	Վճարովի
1.	ԺԲ.00.02	Հանրային իրավունք	1	2
2.	Ը.00.02	Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում	1	2
3.	ԻԳ. 00.02	Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ, միջազգային հարաբերություններ	1	2
4.	ԺԹ. 00.01	Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն	-	1
<b>Ընդամենը</b>			<b>3</b>	<b>7</b>

Համաձայն «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱՅԻ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԿԱՐԳ» -ի՝

Մրցույթին կարող են մասնակցել պետական և հավատարմագրված ոչ պետական բուհերի շրջանավարտները, ովքեր ունեն մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորում և հանձնել են «Օտար լեզու» և «Համակարգչից օգտվելու հմտություններ» առարկաներից տարբերակված ստուգաթղթեր՝ հաղթահարելով հետևյալ անցումային շեմերը.

- Անգլերեն լեզու - բոլոր մասնագիտությունների համար TOEFL-46, IELTS-5,5 միավոր
- Ֆրանսերեն լեզու - բոլոր մասնագիտությունների համար TCF- 200 միավոր
- Գերմաներեն լեզու - բոլոր մասնագիտությունների համար on DaaF-60 միավոր
- Համակարգչից օգտվելու հմտություններ - բոլոր մասնագիտությունների համար 25 միավոր

Դիմորդները մասնագիտական քննությանը մասնակցելու համար ներկայացնում են նաև գիտական ռեֆերատ՝ առնվազն 20 տպագրական էջի սահմաններում (հրատարակված գիտական աշխատանքների, գյուտերի, հայտնագործությունների, գիտահետազոտական աշխատանքների մասին հաշվետվությունների բացակայության դեպքում)՝ մասնագիտական ամբիոնի կողմից գրավոր դրական գրախոսությունով:

Դիմորդները հանձնում են ընդունելության քննություն մասնագիտական առարկայից, որը գնահատվում է 20 միավորային սանդղակով: Մինչև 12 միավոր(ներառյալ) ստացած դիմորդը զրկվում է ասպիրանտուրա ընդունվելու իրավունքից:

Մրցույթն իրականացվում է ըստ մասնագիտական քննությունից ստացած գնահատականի: Մասնագիտական քննությունից ստացած հավասար գնահատականների դեպքում հաշվի են առնվում հետևյալ ցուցանիշներն՝ ըստ հերթականության՝

- Մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի ընդհանուր կամ միջին որակական գնահատականը.
- Բակալավրի և մագիստրոսի ընդհանուր միջին որակական գնահատականի գումարը.
- Հրատարակված գիտական աշխատանքների թիվը.
- Միջազգային կամ հանրապետական ուսանողական առարկայական մրցույթներում կամ օլիմպիադաներում ստացած դիպլոմները կամ միջազգային գիտաժողովներին մասնակցությունը(զեկուցումները).

Ասպիրանտուրայի դիմորդների փաստաթղթերը ընդունվում են մինչև ս.թ. հունիսի 7-ը ներառյալ, երկուշաբթի- ուրբաթ օրերին, ժամը 9:00 – 17:00, իսկ մասնագիտական քննության հանձնումը՝ հունիսի 10-ից 14-ը ներառյալ:

Դիմորդներն անձամբ ասպիրանտուրայի բաժին են ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

- դիմում ակադեմիայի ռեկտորին՝ նշելով ընտրած մասնագիտությունը,
- «Օտար լեզու» և «Համակարգչից օգտվելու հմտություններ» առարկաներից տարբերակված ստուգարքներ հանձնելու մասին ասպիրանտուրա ընդունվողի ստուգարքային թերթիկները,

- մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի դիպլոմը և գնահատականների ներդիրը և դրանց պատճենները,
- որակավորման քննությունների հանձնման մասին վկայական, եթե դրանք հանձնված են,
- կադրերի հաշվառման անձնական թերթիկ, ինքնակենսագրություն և չորս լուսանկար (3X4 սմ չափսի),
- անձնագիրը և պատճենը,
- քաղվածք աշխատանքային գրքույկից (եթե դիմորդն աշխատում է),
- զինվորական գրքույկը և դրա պատճենը կամ զորակոչային տեղամասում կցագրման վկայականը և դրա պատճենը,
- գիտական ռեֆերատ՝ առնվազն 20 տպագրական էջի սահմաններում՝ (հրատարակված գիտական աշխատանքների, գյուտերի, հայտնագործությունների և գիտահետազոտական աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունների բացակայության դեպքում):

**Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել**

**ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ասպիրանտուրայի բաժին**

**ք. Երևան-0028, Կիևյան 8, հեռ. 27 75 15**